

COVID-19 Պատվաստանյութի Խաբեություններ

Երբ առողջական ճգնաժամ է լինում, խաբեբաները միշտ ուղիներ են գտնում մարդկանց իրենց գումարների վերաբերյալ խաբելու համար: Կորոնավիրուսային համավարակի ընթացքում խաբեբաները օգտագործում են ռոբոտացված զանգեր, սոցիալական լրատվամիջոցների հաղորդագրություններ և էլեկտրոնային փոստ COVID-19-ի վերաբերյալ վախից, անհանգստությունից և շփոթությունից օգտվելու նպատակով: Նրանք վաճառում են ապրանքներ, որոնք չեն աշխատում, գումար են գանձում ապրանքների համար, որոնք անվճար են, և գողանում են անձնական տվյալներ: Այժմ, երբ [COVID-19 պատվաստանյութը](#) Լոս Անջելեսի Շրջանում է, խաբեբաները թիրախավորում են տեղի բնակչությանը նոր, պատվաստանյութի հետ կապված սխեմաներով: Զգույշ եղե՛ք:



COVID-19 պատվաստանյութը բաշխվում է Լոս Անջելեսի Շրջանում արդար և թափանցիկ ճանապարհով: Եթե ինչ-որ մեկը ձեզ առաջարկի վաճառել արտահերթ պատվաստվելու հնարավորություն, դա խաբեություն է:

- Տվյալ պահին պատվաստանյութն առաջարկվում է առողջապահական ոլորտի աշխատակիցներին և այն մարդկանց, ովքեր ապրում են երկարաժամկետ խնամքի հաստատություններում (օրինակ՝ ծերանոցներում):
- Էական աշխատողներին, ովքեր չեն կարող տնից աշխատել, հնարավոր է հաջորդն առաջարկեն պատվաստանյութը, որովհետև նրանք COVID-19 վիրուսով վարակվելու բարձր վտանգի գոտում են: Ծերերը և առողջական խնդիրներ ունեցող մեծահասակները նույնպես կարող են հաջորդը լինել, որովհետև ավելի հավանական է, որ նրանք ծանր կհիվանդանան, եթե COVID-19-ով վարակվեն:
- 16 տարեկանից ցածր երեխաներին մոտ ապագայում պատվաստանյութ չի առաջարկվի: Պատվաստանյութերը չի թույլատրվում տալ տարիքային այս խմբին:
- Երբ ավելի շատ պատվաստանյութ հասանելի լինի, այն կառաջարկվի բոլորին: **Հավանական է, որ սա ամիսներ կտևի: Հնարավոր է, որ պատվաստանյութը չառաջարկվի հանրությանը մինչև 2021թ.-ի Գարուն/Ամառ:**
- Պատվաստանյութը ստանալու մասին տեղեկությունը կհրապարակվի Հանրային Առողջապահության [COVID-19-ի կայքէջում](#) (ph.lacounty.gov/Coronavirus/vaccine/), երբ պատվաստանյութը հասանելի լինի տարիքային տարբեր խմբերի համար:
- Եթե հարցեր ունեք, խոսեք ձեր բժշկի հետ: Զանգահարեք 2-1-1 կամ այցելեք [211LA կայքը](#), եթե բժիշկ գտնելու հարցում օգնության կարիք ունեք:

COVID-19 պատվաստանյութը կտրվի Լոս Անջելես Շրջանի բնակիչներին անվճար և *անկախ ներգաղթային կարգավիճակից*: Եթե ինչ-որ մեկն ասի, որ կարող է ձեզ համար հատուկ, ցածր գնով գործարք գտնել, կամ որ կարող եք պատվաստանյութը թաքուն ստանալ, դա խաբեություն է:

- COVID-19 պատվաստանյութ ստանալու համար ձեզնից վճար կամ համավճար չի գանձվի: Պատվաստանյութը տալու համար բժիշկը կամ դեղատունը կարող է գանձել վճար, բայց այն պետք է վճարվի պետական և մասնավոր ապահովագրական ընկերությունների կողմից: Առողջապահական ապահովագրություն չունեցող մարդիկ COVID-19 պատվաստանյութը կարող են անվճար ստանալ:
- COVID-ի պատվաստանյութը ստանալիս ձեզ ՉԵՆ հարցնի ձեր ներգաղթային կարգավիճակի մասին: Ձեր բժշկական տեղեկությունները գաղտնի են: Ձեր բժշկին չի թույլատրվում դրանք ներգաղթային պաշտոնյաներին տրամադրել:

COVID-19 Պատվաստանյութի Խաբեություններ

- Այցելեք [Լոս Անջելես Շրջանի Աերգաղթյալների Գործերի Գրասենյակի COVID-19-ի էջը](#) ներգաղթյալների համար COVID-19-ի վերաբերյալ թարմացումների համար:

ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇ-ը նախազգուշական նշան կամ ազդանշան է, որ ինչ-որ բան կարող է խաբեություն լինել: Ուշադրություն դարձրեք COVID-19 պատվաստանյութի այս կարմիր դրոշներին՝

- Ինչ-որ մեկն առաջարկում է ձեզ տեղափոխել ավելի վաղ խումբ՝ պատվաստանյութի համար վճարելու դիմաց:
- Ինչ-որ մեկը փորձում է ձեզ տեղ վաճառել COVID պատվաստանյութի սպասման ցուցակում: **«Պատվաստանյութի սպասման ցուցակ» գոյություն չունի:**
- Ինչ-որ մեկը փողոցում, առցանց, սոցիալական ցանցերում կամ ձեր դուռը թակելով փորձում է ձեզ վաճառել պատվաստանյութի ներարկում:

Տեղական COVID-ի պատվաստանյութի խաբեության մեջ մի տղամարդ հայտնել է, որ իրեն առաջարկում են պատվաստանյութեր իր ամբողջ ընտանիքի համար՝ մեկ անձի համար \$49: Բարեբախտաբար, տղամարդու վարկային քարտերի ընկերությունը մերժեց վճարումը: Պատվաստանյութերը կարող են տրվել միայն լիցենզավորված բժշկական մատակարարների կողմից:

- Դուք պատվաստանյութի վերաբերյալ զանգեր, հաղորդագրություններ կամ էլ.նամակներ եք ստանում: Չանգահարողը հարցնում է ձեր անձնական կամ ֆինանսական տեղեկությունները: Դա կարող է լինել ձեր սոցիալական ապահովագրությունը, բանկային հաշիվը կամ վարկային քարտի համարը: ԵՐԲԵՔ այս թվերը կամ այլ անձնական տեղեկությունները մի՛ տվեք անհայտ զանգահարողին կամ հաղորդագրության կամ էլ.նամակի մեջ:
- Դուք տեսնում եք կեղծ պատվաստանյութերի կամ «հրաշք բուժման» գովազդներ, որոնք օգտագործում են վիտամիններ կամ այլ սննդային հավելումներ: Խաբեբաները խթանում են դրանք, չնայած ապացուցված չէ, որ նրանք գործում են: FDA-ը նախազգուշական նամակներ է տրամադրել բազմաթիվ ընկերությունների՝ այն ապրանքները վաճառելու համար, որոնք պնդում են, որ կանխում, օգնում կամ բուժում են COVID-19-ը:
- Եթե որևէ մեկը, ով ձեր համայնքում լավ հայտնի չէ (օրինակ՝ բժիշկ, առողջապահական կլինիկա, դեղատուն, Շրջանի առողջապահական ծրագիր), ձեզ պատվաստանյութ է առաջարկում, կրկնակի մտածեք և ճշտեք ձեր բժշկի հետ: Թույլ մի՛ տվեք խաբեբաներին հաղթել:

Փաստացիորեն, ցանկացած պատվաստանյութ, դեղամիջոց կամ առողջապահական արտադրանք օգտագործելուց առաջ միշտ խոսեք բժշկի կամ առողջապահական այլ մատակարարի հետ:

COVID-19 Պատվաստանյութի Խաբեություններ

Օգնություն Ստացեք

- **Բժիշկ գտեք.** զանգահարեք 2-1-1 հեռախոսահամարով Լոս Անջելեսի Շրջանի տեղեկատվական զծին կամ այցելեք [211LA կայքը](#):
- **Գտեք ռեսուրսներ, ինչպիսիք են սնունդը, դեղամիջոցները և այլ անհրաժեշտ պարագաները.** զանգահարեք 2-1-1 կամ այցելեք [211LA կայքը](#), կամ Հանրային Առողջապահության [ռեսուրսների կայքէջը](#):
- **Հաղորդեք հավանական COVID-19 խաբեության մասին և օգնություն ստացեք՝ փորձելով վերադարձնել ձեր գումարը.** կապվեք Լոս Անջելես Շրջանի Սպառողների և Ձեռնարկությունների Հարցերով Վարչության (DCBA) հետ. dcba.lacounty.gov կամ 800-593-8222 հեռախոսահամարով:
- **Հաղորդեք պատվաստանյութերի, փորձարկման կամ բուժման արտադրանքի վերաբերյալ կասկածելի պնդումների մասին.** հաղորդեք FTC-ին ftc.gov/complaint:

Տեղեկացված եղեք՝ վստահելի տեղեկատվությամբ:

Զգուշացեք կեղծ լուրերից և կեղծիքներից, ինչպես նաև COVID-19 խաբեություններից

Կորոնավիրուսի Թարմացումներ

- Այցելեք ph.lacounty.gov/media/Coronavirus, գրանցվեք մամուլի հաղորդագրությունների համար, կամ հետևեք մեզ @lapublichealth
- Այցելեք Շրջանի COVID-19-ի կայքէջը covid19.lacounty.gov
- Ստուգեք CDC-ի կայքը www.cdc.gov/coronavirus

Խաբեության Մասին Ահազանգեր

Տեղեկացված եղեք վերջին խաբեություններից և նախագգուշական միջոցներից, որոնք դուք և ձեր ընտանիքը պետք է ձեռնարկեք:

- Իմացեք Լոս Անջելես Շրջանի Սպառողների և Ձեռնարկությունների Հարցերի [սպառողների ահազանգերի](#) վերջին խաբեությունների մասին:
- Այցելեք Լոս Անջելես Շրջանի [Ներգաղթյալների Գործերի Գրասենյակի COVID-19-ի](#) կայքէջը
- Գրանցվեք Թոշակատուների Ամերիկյան Ասոցիացիայի (AARP) [Խարդախության Մասին Ահազանգերի Դիտմանը](#)
- Գրանցվեք Առևտրի Դաշնային Հանձնաժողովի [սպառողների ահազանգերը](#) ստանալու համար

Իմացեք COVID-19 այլ տարածված խաբեությունների և կեղծիքների մասին՝ այցելելով ph.lacounty.gov/hccp/covidscams:

Գրանցվեք COVID-19 Պատվաստանյութի Էլ.փոստի Տեղեկագրմանը

COVID-19 պատվաստանյութի կանոնավոր թարմացումներին գրանցվելու համար այցելեք [COVID-19 Պատվաստանյութի](#) կայքէջը: